

ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРЦАХ  
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ И СПОРТА  
УНИВЕРСИТЕТ МЕСРОП МАШТОЦ

THE REPUBLIC OF ARTSAKH  
THE MINISTRY OF EDUCATION, SCIENCE AND SPORT  
MESROP MASHTOTS UNIVERSITY

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ  
СБОРНИК СТАТЕЙ КОНФЕРЕНЦИИ  
SET OF CONFERENCE ARTICLES

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝  
նվիրված Մեսրոպ Մաշտոց Համալսարանի գործունեության  
20-ամյակին

*ԿՈՎԿԱՍՆ՝ ՄԵՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՈՒՆ*

МЕЖДУНАРОДНАЯ НАУЧНАЯ КОНФЕРЕНЦИЯ,  
посвященная 20-летию деятельности  
Университета Месроп Маштоц

*КАВКАЗ – НАШ ОБЩИЙ ДОМ*

INTERNATIONAL SCIENTIFIC CONFERENCE  
DEVOTED TO THE 20<sup>TH</sup> ANNIVERSARY OF MESROP MASHTOTS UNIVERSITY

*CAUCASUS – OUR COMMON HOME*

27-29 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ  
ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 2017

27-29 ОКТЯБРЯ  
СТЕПАНАКЕРТ 2017

27-29 OCTOBER  
STEPANAKERT 2017

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Նախագահ՝  
Համանախագահ՝

Ղ.Ս.Գաբրիելյան, ՄՄՀ ռեկտոր, մ.գ.թ., ՄՄՀ պրոֆեսոր (Արցախ)  
Ղ.Ս.Բաբայան, փ.գ.թ., ՄՄՀ պրոֆեսոր (Արցախ)

Վ.Ռ.Բալայան  
Ս.Ա.Խանյան  
Ս.Շ.Ծաղիկյան

Արցախի Հանրապետության Ազգային ժողովի փոխնախագահ, պ.գ.դ., պրոֆեսոր  
ԱրՊՀ և ՄՄՀ պրոֆեսոր, բ.գ.դ.  
ՀՌՀ քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի վարիչ,  
ի.գ.դ., պրոֆեսոր

Ա.Ս.Ծպենցյան  
Վ.Ն. Կոնովալով

ՀՀ պետական կառավարման ակադեմիա, տ.գ.թ., դոցենտ  
ՀՂՀ, Սոցիոլոգիայի և տարածաշրջանագիտության ինստիտուտի կոնֆլիկտոլոգիայի և  
ազգային անվտանգության ամբիոնի փ.գ.թ., պրոֆեսոր  
ՊՊԼՀ պ.գ.թ., դոցենտ, ՄՄՀ պատվավոր պրոֆեսոր

Վ.Զ.Հակոբյան  
Է.Ա.Հայրապետյան  
Լ.Շ.Հովհաննիսյան  
Լ.Գ.Ղարախանյան

ՄՄՀ պրոռեկտոր, մ.գ.թ., դոցենտ  
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր  
ԱՀ ԿԳՄՆ, հ.գ.թ., դոցենտ

Է.Գ.Մինասյան  
Լ.Ա.Միրզոյան  
Վ.Ս.Պետրոսյան

ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, պ.գ.դ., պրոֆեսոր  
ՀՃՇԱՀ, մանկ. գիտ. թեկ., դոցենտ  
ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի վարիչ, ԵՊՀ  
հայ-քրդական առնչությունների բաժնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ  
Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետի դեկանի  
տեղակալ, պ.գ.դ.

Ս.Ա.Պողոսյան

Ս.Պ.Պոգեբուն

ՀՂՀ, Փիլիսոփայության և հասարակա-քաղաքական  
գիտությունների ինստիտուտի տեսական և կիրառական քաղաքագիտության ամբիոնի  
պրոֆեսոր, ք.գ.դ.

Գ.Ս.Քեչյան

ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի վարիչ, ք.գ.դ.,  
պրոֆեսոր

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Председатель:  
Сопредседатель:

Д.С.Габриелян, ректор УММ, к.п.н., профессор УММ  
Г.М.Бабаян, к.филос.н., профессор УММ

Ճ.Ա.Այրապետյան  
Յ.Յ.Ակոբյան  
Յ.Ր.Բալայան  
Լ.Գ.Կարահանյան  
Լ.Մ.Կերյան  
Յ.Ն.Կոնովալով

к.п.н., доцент, проректор УММ  
ПГЛУ, к.ист.н., доцент, почетный профессор УММ  
вице-спикер Национального Собрания РА, д.и.н., профессор  
МОНС РА, к.п.н., доцент  
Заведующий кафедрой политических институтов и процессов ЕГУ, д.п.н., профессор.  
профессор кафедры конфликтологии и национальной безопасности Института социологии и  
регионоведения ЮФУ, д.ф.н.

Ճ.Գ.Մինասյան  
Լ.Ա.Միրզոյան  
Լ.Ս.Օգանեսյան  
Յ.Ս.Սեդրոսյան

декан исторического факультета ЕГУ, д.и.н., профессор  
НУАСА, к.п.н., доцент  
Член-корреспондент НАН РА, профессор  
заведующий кафедрой международных отношений и дипломатии ЕГУ, руководитель отдела  
армяно-курдских отношений ЕГУ, к.и.н., доцент

Ս.Ա.Սոցոսյան  
Ս.Ս.Սոցոսյան

заместитель декана факультета истории и правоведения АГПУ им.Х.Абовяна, д.и.н.  
профессор кафедры теоретической и прикладной политологии Института философии и  
социально-политических наук, ЮФУ, д.п.н.

Ս.Ա.Սահյան  
Ս.Ս.Սահյան  
Ա.Ս.Սահյան

д.ф.н., профессор АрГУ и УММ  
зав.кафедрой уголовного права и уголовно-процессуального права РАУ, д.юр.н., профессор  
Академия государственного управления РА, к.э.н., доцент

ՀՏԳ 378:06  
ԳՍԳ 74.58  
Կ 767

Կովկասը՝ մեր ընդհանուր տուն: Միջազգային գիտաժողով՝  
Կ 767 նվիրված Մեսրոպ Մաշտոց համալսարանի գործունեության 20-ամյակին:  
Ստեփանակերտ: «Դիզակ պլուս» հրատ., 2017.- 508 էջ:

Настоящий сборник статей по итогам международной научной конференции, проходившей в Университете Месроп Маштоц города Степанакерта (27-29 октября 2017 года), представляет собой результат сотрудничества ученых Арцаха, Армении и других стран СНГ. Участники конференции представили свое видение и анализ актуальных вопросов гуманитарного, экономического и социально-политического развития региона.

ՀՏԳ 378:06  
ԳՍԳ 74.58

ФИЛОСОФИЯ, ИСТОРИЯ, ПРАВО, ПОЛИТОЛОГИЯ, МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ,  
РЕГИОНОВЕДЕНИЕ

ՂԱՐԱԲԱՂ-ԶԱՆԳԵԶՈՒՐԸ ԱՂԲԵԶԱՆԱ-ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՈՒՈՐՏՈՒՄ (1918-1919 թթ.)

Հրանտ Աբրահամյան  
Պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ  
Հայաստան

**Անտառագիտ:** 1918 թ. աշնան վերջին Առաջին աշխարհամարտում Թուրքիայի պարտությունից և իր զորքերը Անդրկովկասից դուրս բերելուց հետո, Անտանտի դաշնակից ուժերը, անգլիացի զենեղալ Վ. Թոմսոնի հրամանատարությամբ, մտնում են Բաքու: Գենեղալը Ադրբեջանի մուսավաթական կառավարության դրդմամբ քայլեր է ձեռնարկում պատմական Հայաստանի տարածքներ Արցախ-Զանգեզուրը Ադրբեջանին բռնակցելու համար: Սակայն Արցախ-Զանգեզուրի հայությունը վճռականորեն մերժում է անգլո-ադրբեջանական նկրտումները: Ադրբեջանաբրիտանական գաղութարարների քաղաքականությունն ավարտվում է պարտությամբ: 1919 թվականի ամռանը անգլիացիները Ղարաբաղից հեռանում են ամոթաբար, որոնց արցախահայությունը ճանապարհում է աստելությամբ և նգովքով:

**Բանալի բառեր՝** աշխարհամարտ, զինադադար, դաշնակիցներ, ինտերվենցիա, վերամիավորվել, նվիրաբերել, երկրամաս, առաքելություն, ազգային խորհուրդ, գաղութացնել, կաշառակեր:

Հարցին անդրադարձել են բազմաթիվ հայ հեղինակներ<sup>1</sup>: Սակայն հարցը դեռևս մնում է չսպառված և դրա հետ առնչվող մի շարք խնդիրներ չպարզաբանված: Օրինակ, Անտանտայի դաշնակից Անգլիան, ինչու էր շահագրգռված Արցախ-Զանգեզուրը բռնակցել Ադրբեջանին, Հայաստանի Հանրապետությունը ինչու շատ ուշացումով սկսեց անհանգստանալ Արցախ-Զանգեզուրի հարցով և այլն:

Առաջին աշխարհամարտում Թուրքիան, պարտություն կրելով Միջագետքում, Սիրիայում, Պաղեստինի, Դարդանեղի և Մակեդոնիայի ճակատամարտերում, իրեն ճանաչեց պարտված: Հոկտեմբերի 30-ին Անտանտի զորքերի հրամանատարության և սուլթանական կառավարության միջև Մուդրոս կղզում կնքվեց զինադադար, որի 11-րդ հոդվածի հիման վրա Թուրքիան իր զորքերը հանեց Անդրկովկասից: Չախջախված թուրքական ուժերը հեռացան նաև Ղարաբաղից տանելով բնակչությունից թալանված բարիքները [14]: Սակայն դաշնակից պետությունները հետևողական չեղան այդ հարցում: Դրանցից օգտվելով՝ թուրքական սպաները՝ Նուրի, Խալիլ, Քյազիմ փաշաների գլխավորությամբ, մնացին Թուրքիայի կողմից ստեղծված Ադրբեջան կոչված պետությունում՝ նպատակ ունենալով կազմակերպել և գլխավորել մուսավաթական բանակը:

<sup>1</sup> Լեո, Միմոն Վրացյան, Ալեքսանդր Խատիսյան, Հրաչիկ Միմոնյան, Եղիշե Իշխանյան, Հարություն Թումյան, Գալուստ Գալոյան, Գրիգոր Հովհաննիսյան, Վարդգես Միքայելյան, Բագրատ Ուլուբաբյան, Աբրահամ Կիսիբեկյան, Արամայիս (Միսակ Տեր-Դանիելյան), Միքայել Թումանյան, Հրանտ Աբրահամյան, Համլետ Հարությունյան, Վահրամ Բալայան, Գայանե Մախմուրյան և ուրիշներ:

Քննարկվող հարցին անդրադարձել են նաև թուրքախոս բազմաթիվ հեղինակներ: Վերջին տարիներին մի քանի տասնյակ թուրք հեղինակներ տարբեր տեղերում և տարբեր լեզուներով հրատարակել են բազմաթիվ հոդվածներ և գրքեր, որոնցում կեղծված են ոչ միայն վերոնշյալ հարցի հետ առնչվող խնդիրները, այլև, ընդհանրապես, հայ ժողովրդի պատմությունը: Կեղծարարների այդ շարքին, տարված ալիսյան մոլուցքով, ոչնչի առաջ կանգ չի առնում: Կարելի է նշել Ադրբեջանի նախագահական գրադարանի աշխատողների կազմած «Геноцид и депортация Азербайджанцев», Баку, 2011, Исмаилов Э., «Очерки по истории Азербайджана», Москва, 2010, «Ղարաբաղի ազատագրման կազմակերպության» կողմից 2005, 2006, 2007 և 2008 թվականներին Բաքվում կազմակերպված գիտապրակտիկ կոնֆերանսի նյութերը՝ երկու հատորով՝ «Карабах вчера, сегодня и завтра», Баку, 2009, «Азербайджанская Демократическая Республика (1918-1920)», Баку, 1998, Юсиф-заде С., «Первая Азербайджанская Республика: история, события, факты англо-азербайджанских отношений», Баку, 1998 և այլ գրքեր:

Մինևսյն ժամանակ դաշնակից պետությունների ուժերը, որոնք գտնվում էին Էնզելում, հրաման են ստանում մտնել Բաքու և օկուպացնել նահանգը:

1918 թ. մայիսի վերջին Անդրկովկասի սեյմի լուծարումից հետո երկրամասում ստեղծված երեք հանրապետություններից մեկը կոչվում էր Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետություն (ԱԴՀ): Քանի որ Բաքուն հանդիսանում էր նույն թվականի գարնանը այնտեղ ստեղծված խորհրդային իշխանության կենտրոնը, Ադրբեջանի Հանրապետության ժամանակավոր նստավայր է ճանաչվել Ելիզավետապոլը՝ հայոց Գանձակը, որը թուրքերը վերանվանել էին Գյանջա: Այստեղ կուտակվում էին թուրք զինատիչների ուժերը՝ Բաքվի վրա հարձակվելու և խորհրդային իշխանությունը տապալելու համար: Նրանք իրենց նպատակին հասան 1918 թ. սեպտեմբերին, որի արդյունքում 30 հազար հայ զազանաբար սրի մատնվեց [7, էջ 185]:

Էնզելում գտնվող դաշնակից ուժերի հրամանատարն էր անգլիացի գեներալ Վ. Ի. Թոմսոնը: Իմանալով, որ Անտանտի ուժերը պիտի մտնեն Բաքու, ԱԴՀ իշխանությունները ազգային խորհրդարանի մի պատվիրակություն են ուղարկում Էնզել գեյն. Թոմսոնի հետ բանակցելու համար: Նրանց նպատակն էր մինչև դաշնակիցների ուժերը կմտնեին Բաքվի նահանգ, Թոմսոնին համոզել ճանաչել Ադրբեջանի անկախությունը: Ըստ թուրք հեղինակների՝ Թոմսոնը հրաժարվում է կատարել այդ պահանջը՝ պատճառաբանելով, որ «Ադրբեջանական Հանրապետություն անունով պետություն մեզ հայտնի է միայն թուրքերի խարդավանքների հետևանքով ստեղծած պետությունը, որը ժողովրդական զանգվածի շրջանում ոչ մի հենարան չունի» [37, էջ 49]: Հանրապետության վարչապետ Ֆաթալիխան Խոյսկին նոյեմբերի 16-ին Վ. Թոմսոնին ուղարկած նամակում հույս է հայտնում, որ անգլիական բանակը, Բաքու մտնելով, «Չի խախտի Ադրբեջանի անկախությունը և նրա տարածքի ամբողջականությունը» [37, էջ 49]: Ադրբեջանի մուսավաթական կառավարության ներկայացուցիչներին հաջողվում է Էնզելում Վ. Թոմսոնի հետ համաձայնության գալ: Դաշնակիցների ուժերի հրամանատարը համաձայնվում է չխառնվել ադրբեջանական կառավարության ներքին գործերին [37, էջ 49]: Նոյեմբերի 17-ին գեյն. Վ. Թոմսոնը մտնելով Բաքու, իրեն հայտարարում է նահանգապետ, և օկուպացնում քաղաքը: Մինչև անգլիացիների Բաքու մտնելը, Ադրբեջանի կառավարությունը սկսել էր քաղաքի անվանի հայերին ձերբակալել: «Աշխատավորը» 1918 թ. դեկտեմբերի 1-ին հաղորդել էր, որ գեներալ Թոմսոնը Ադրբեջանի կառավարությանը 72 ժամ ժամանակ է տվել «բոլոր բանտարկված հայերին ազատ արձակել»:

Դաշնակիցների ուժերը Անդրկովկաս ներխուժեցին նաև Սև ծովի կողմից: Նոյեմբերի 22-ին անգլո-ֆրանսիական ծովային ուժերը, բաղկացած 20 հազար մարդուց, հասել էին Սևաստոպոլ, նոյեմբերի վերջին՝ Օդեսա, որից հետո ինտերվենցիա են սկսում Անդրկովկասում: Անգլիական առաջին միսիան Բաթում է հասնում 1918 թ. դեկտեմբերի 6-ին՝ անգլիացի Ուեմստերի գլխավորությամբ [38, էջ 50]<sup>1</sup>: Անգլիական բանակը, դեկտեմբերի 23-ին դուրս գալով Բաթումից, 25-ին մտնում է Թիֆլիս: Սկսվում է Վրաստանի օկուպացիան: Արդեն 1919 թ. սկզբին Վրաստանի բոլոր ռազմավարական կետերը և վարչական կենտրոնները գտնվում էին անգլիական իշխանության տակ: Բաքվում գտնվող դաշնակից ուժերի հրամանատար գեյն. Թոմսոնը այսպես է բնորոշել իր գլխավորած բանակի մոտակա խնդիրները. «Այն բանակը, որը ներկայումս Բաքվում գտնվում է իմ հրամանատարության տակ, հանդիսանում է դաշնակիցների միայն առաջատար մասը, որը մոտակա ժամանակներում կգրադեցնի Կովկասը: Մեր պարտականությունն է՝ բոլոր երկրներում պաշտպանել կարգապահությունը և տեղական ժողովուրդներին օգնել բոլշևիզմի ոչնչացման գործում» [38, էջ 50]: Ըստ էության՝ դաշնակիցների ուժերը Կովկաս էին եկել տեղական բնակիչներին թուրք դահիճներից ոչ թե փրկելու համար, այլ բոլշևիզմը ոչնչացնելու նպատակով: Սև ծովից մինչև Կասպից ծով ընկած ամբողջ տարածքը գտնվելով դաշնակից ուժերի տիրապետության տակ՝ նրանք իրենց իսկական նպատակը թաքցնում էին իբրև կարգ հաստատելու, ժողովուրդների միջև համերաշխությունը ամրապնդելու և գաղթականներին օգնություն ցույց տալու խոստման տակ:

Ճակատագրի բերումով, զորավար Անդրանիկը 1918 թ. օգոստոսի 3-ից գտնվում էր Չանգեզուրում: Օգտվելով դրանից՝ արցախահայությունը նրան խնդրում էր իրենց օգնել վերամիավորվելու մայր Հայաստանի հետ: Չորավարը խոստանում է օգնության ձեռք մեկնել հայրենակիցներին: Սակայն ազգային հերոս այդ խոստումը կատարելու ճանապարհին, ստիպված էր

<sup>1</sup>«Աշխատավորը» 1918 թ. նոյեմբերի 11-ին հաղորդել է, որ նոյեմբերի 13-ին Բոսֆորից դուրս են եկել 6 կրեյսերներ դեսանտային զորամասով: Կրեյսերներին Բաթումում սպասում էին նոյեմբերի 14-15-ը:

ենթարկվել Բաքվում գտնվող անգլիական հրամանատարության պահանջին ու ետ վերադառնալ Գորիս: Հովակ Մտեփանյանը հետագայում գրել է. «Ղարաբաղ, թե՛ հայկական հարց»,- ահա այսպիսի կոպիտ երկրնորանքի առաջ կանգնեց հերոսը և կատարեց օրհասական սխալը, որը հետագայում ունեցավ իր այնքան մեծ ու անուղղելի բացասական հետևանքները...» [28, էջ 127]: Անգլիացի գեներալը այդ քայլը կատարել է Ադրբեջանի մուսավաթական կառավարության դրոմամբ: Լեոն գրել է, որ այդ ժամանակ, ըստ էության, արդեն վաճռված էր Արցախ-Չանգեզուրի ճակատագիրը, ասել է թե՛ «նա պիտի զոհ գնար անգլիական չարչիությանը», որի հետևանքներն էին «Բաքվում նստած եւ հոգով ու մարմնով մուսավաթականներին ծախված անգլիացիները» [6, էջ 387]: Այո՛, շեշտում է հայ պատմաբանը, «Մուսավաթը գիտեր, թե ինչ է անում, իսկ «անգլիական հրամանատարությունն էլ զուր չէր նրա մտերիմ, հոգեկից բարեկամը» [6, էջ 388]: «Լիրբ ու անբարոյական անգլիացիները» Անդրկովկասում իրենց պահում էին այնպես, «ինչպես սովոր էին պահել իրենց Աֆրիկայի կամ Պոլինեզիայի գաղութներում, տեղացի վայրենի ցեղերի մեջ: Այստեղ, մեզանում էլ նրանք ամենքը՝ գեներալ, սպա թե հասարակ զինվոր, իրենց նկատմամբ էին իբր բարձր էակներ, իսկ տեղացիներին նայում էին իբրև մի ստոր մարդկային ցեղի վրա» [6, էջ 390]: Հայ պատմաբանը խիստ վրդովված հարցնում է. «Ո՞վ է ասում, թե անգլիացիները չեն կոտորել տվել հայ ժողովրդին: Ով այսպիսի բան ասում է, նա սուտ է ասում» [6, էջ 390]: Անգլիացի գեներալի ոչ ազնիվ լինելու մասին Բագրատ Ուլուբաբյանը գրել է, որ Ադրբեջանի ղեկավարությունը և Թոմսոնը Արցախի խնդիրը կարող են լուծել նախ և առաջ կաշառքի միջոցով [10, էջ 213]:

Անկախության շնչով ապրող արցախցին վաղուց էր մերժել թուրքի հոխորտանքները և ընդամենը մեկ ամիս առաջ Մարտակերտի և Սամնայի ճակատամարտերում ցույց տվել իր բազկի ուժը: Հիմա՛, մեկ ամիս անց, նավթի բուրմունքից արբած՝ զզվանք ու անեծք առաջացնող անգլիացի գեներալը շտապում էր կատարել Բաքվին տված խոստումը՝ Արցախ-Չանգեզուրը նվիրաբերել «մուսավաթին»: Նրա՛ այդ օրերի գործունեության մասին ժամանակակիցներից Հարություն Թումյանը գրել է. «Գեներալ Թոմսոնն այնքան էր հղիացել անգլիական գլխավոր հրամանատարության խրախուսանքներով, որ գործում էր համարձակ, առանց քաշվելու անգամ դաշնակից ֆրանսիացիներից, որոնց ներկայացուցիչը Թիֆլիսում բացարձակ դեմ էր արտահայտվել անգլիացի սպաների՝ Ադրբեջանում վարած թուրքոֆիլ քաղաքականությանը» [11, էջ 199]: Իբրև գաղթականների հարցով անհանգստացած գեներալը ներկայացուցիչներ է ուղարկում Ելիզավետպոլի նահանգ՝ այնտեղ հայերի հանդեպ տեղի ունեցած վայրագությունները ստուգելու համար: Գաղթականների գործերի լիազոր Գիբբոնը և կապիտան Դոյտը, լինելով Նուխու և Չաքաթալայի շրջաններում, ոչինչ էլ չեն ձեռնարկում և այնտեղի հայերի վիճակը մնում էր անտանելի [24]:

Արցախահայությունը լոյալ ընդունեց անգլիացիների մուտքը երկրամաս: Անգլիացիների գալով՝ նրանք հույս ունեին, թե երկրամասում կվերանա թուրքական վտանգը, Արցախը կազատվի կղզիացումից, կբացվեն և անվտանգ կդառնան ճանապարհները, կսկսվեն բարի դրացիական հարաբերությունները հարևան մուսուլմանների հետ, երկրամասում կհաստատվի կայուն խաղաղություն, ամբողջովին կվերականգնվի պետական ու հասարակական մարմինների գործունեությունը, կթեթևանան պարենային ծանր պայմանները, հոգ կտարվի գաղթականների մասին և, վերջապես, որն ամենակարևորն էր, դրականորեն կլուծվի Արցախը Հայաստանի հետ վերամիավորվելու հարցը, ինչպես որոշել էին Ղարաբաղի հայության համագումարները:

1918 թ. նոյեմբերի երկրորդ կեսին անգլիացիները, Ղարաբաղում երևալուց հետո, դեկտեմբերի 2-ին Շուշիում հրավիրում են երկրամասի բոլոր քաղաքական և հասարակական հոսանքների ներկայացուցիչների ժողով, որտեղ որոշվում է Ղարաբաղ-Չանգեզուրը ճանաչել Հայաստանի Հանրապետության անբաժան մաս: Մինևույն ժամանակ «Ժամանակաւոր Ազգային Խորհրդին առաջարկեց՝ առաջիկայ իրենց գործունեութեան ընթացքին առաջնորդել այդ տեսակետով» [8, էջ 303]:

Այդ օրերին Շուշի հասնելով՝ գեն. Թոմսոնի պատվիրակ վերոհիշյալ մայր Գիբբոնի ստորագրությամբ դեկտեմբերի 2-ին քաղաքի պատերին երևում է երկրամասի ազգաբնակչությանն ուղղված մի հայտարարություն, որը փորձում էր բնակչությանը համոզել, որ իրենք՝ անգլիացիները, եկել են Շուշիի շրջանում օրենքն ու կարգը վերականգնելու և փախստականներին օգնություն ցույց տալու համար: Նա երկրամասի քրիստոնյաներին և մահմեդականներին կոչ էր անում հնազանդվել և կատարել այն բոլոր հրամանները, որոնք ինքը կարձակի: Մայրը իրեն օգնականներ է հայտարարում քաղաքագլուխ Գերասիմ Մելիք-Շահնազարյանին և թուրք գավառապետ Խոսրովբեկ Փոլադովին, որը այդ պաշտոնում տաճիկների օրոք նշանակվել էր Ադրբեջանի կառավարության կողմից:

Հայտարարության վերջում ասված է. «...Մենք, գործելով անաչառ, կանենք այն, ինչ օգտավետ ենք գտնում երկու կողմերի համար»[8, էջ 302], [12, էջ 468]: Անկասկած, անգլիական միսիայի ղեկավար մայր Գիբբոնը երկդիմի քաղաքականություն էր վարում և փորձում էր համոզել, որ իր համար քրիստոնյաներն ու մահմեդականները հավասար են, սակայն, իրականում չէր վստահում հայերին: Օրինակ, ասում էր, թե Ղարաբաղը ղեկավարելու հարցով կարող են զբաղվել գորահրամանատարներն ու մյուս պաշտոնյաները, սակայն գործնականում խոչընդոտում էր նրանց գործունեությանը և զբաղվում լրտեսությամբ՝ գաղտնի տեղեկություններ հավաքելով արցախահայության զինյալ ուժի մասին: Հանդիպելով Արցախի թեմի առաջնորդ Վահան Տեր-Գրիգորյանի հետ և հետը խոսելով հայերեն՝ փորձում էր նրան համոզել, թե ինքը եկել է Ղարաբաղում և Ջանգեզուրում գտնվող գաղթականների վիճակին ծանոթանալու և անհրաժեշտ օգնություն ցույց տալու համար: Հենց այդ օրերին գեն. Թոմսոնը՝ Բաքվում հանդես գալով պաշտոնական հայտարարությամբ, ասում է. «Մեծ Բրիտանիան Ադրբեջանի տարածքը համարում է միասնական ամբողջություն և այդ տարածքի վրա ճանաչում է ադրբեջանական իշխանությունը»: Ըստ Թոմսոնի՝ այդ միասնական տարածքի մեջ մտնում էր նաև Արցախ-Ջանգեզուրը [12, էջ 469]:

1918 թ. դեկտեմբերի 8-ին Շուշի է հասնում գեն. Թոմսոնի երկրորդ միսիան՝ կապիտան Սերբայդի հրամանատարությամբ: Այն բաղկացած էր մի քանի ավտոմոբիլից, 50 զինվորներից՝ գնդացիներով և գենքի այլ տեսակներով զինված: Սերբայդը, Շուշի հասնելով, անմիջապես հայտարարում է, թե եկել է երկու ժողովուրդների միջև խաղաղություն հաստատելու համար: Միաժամանակ տեղեկացնում է, թե Ղարաբաղ է գալիս անգլիական զորքը, որը գտնվում է ճանապարհին [8, էջ 304]:

Դեկտեմբերի 9-ին մայր Գիբբոնը թուրք Աբուլֆազրեկ Հասանբեկովի հետ մեկնում են Գորիս՝ գեն. Թոմսոնի պահանջը զանգեզուրցիներին հասցնելու համար:

Օգտվելով նրանից, որ անգլիական միսիան գտնվում էր Շուշիում, երկրամասի գորահրամանատարների ներկայացուցիչները հանդիպում են նրա հետ: Նախ՝ միսիայի պահանջով նրանք տեղեկություններ են տալիս իրենց շրջանների բնակչության թվի, տնտեսության վիճակի, զինվորական զործերի, Հայաստանի նկատմամբ ունեցած դիրքորոշման մասին, հետո՝ ցանկանում են իմանալ, թե Ղարաբաղի հարցում անգլիացիները ինչ քաղաքականություն են վարում: Անկասկած, միսիան խուսափում է պատասխանից: Հայ հրամանատարների համար պարզ է դառնում, որ անգլիացիները չեն ցանկանում լսել Արցախը մայր Հայաստանի հետ վերամիավորելու պահանջի մասին: Ջորահրամանատարների ներկայացուցիչները, կրկին հավաքվելով Շուշիում և նորից հանդիպելով միսիայի հետ, ցանկանում են մի շարք հարցեր պարզել: Նրանք իրենց վրդովմունքի մասին գորավար Անդրանիկին հաղորդել են. «Դրությունը փոխվեց... Մեզ լուր հասավ, թե պետք է... դելեգացիա ուղարկել Բաքու գեներալ Թոմսոնի մոտ և Շուշիում հայկական կառավարություն ստեղծել: Մեր շրջանները, իրագել լինելով այս բոլորի մասին, շտապեցին առանձին ժողով գումարել և այս անգամ ներկայանալ անգլիական միսիային ոչ իբրև այս կամ այն կառավարության ներկայացուցիչ, այլ իբրև Ղարաբաղի հայության ներկայացուցիչ և այդ միսիայի առաջ որոշ մշակված ծրագիր դնել շուտափույթ իրագործելու համար...Մեր նպատակն է ստեղծել անկախ Ղարափաղի նահանգ և առանձին կառավարություն...» [2, էջ 42-43]: Արցախի գորահրամանատարների ներկայացուցիչներ Ասլան Շահնազարյանը և Արտաշես Տեր-Միքայելյանը դեկտեմբերի 12-ին Անդրանիկին ուղարկած նամակով տազնապ են հայտնում անգլիացիների քաղաքականության վերաբերյալ: Նրանք գորավարին հաղորդում են, որ թեև անգլիացոց միսիային «քանիցս բացատրել ենք, որ Ղարաբաղի զինվորական շրջանները չեն ճանաչել Ադրբեջանի կառավարությունը, բայց նկատելի է, որ Շուշի քաղաքի և Ասկերանի շրջանի վերաբերյալ այս միսիան այլ կարծիքի է, այսինքն՝ համահավասար տալ Ադրբեջանին, բայց մենք չենք կարողանում հաշտվել այդ մտքի հետ» [2, էջ 44]: Ջորավարին հայտնելով, որ Ալիանլուի, Մուսուլմանլարի և այդ շրջանի թուրքերը ավերածություններ են կատարում Դիզակի շրջանում, և եթե «Ադրբեջանը շարունակի... իր ավանտյուրան, այն ժամանակ դրությունը խիստ կծանրանա» [2, էջ 45]:

Գորիս մեկնած մայր Գիբբոնը մայիսի 12-ին վերդառնում է Շուշի: Անդրանիկը ընդունել էր միսիային, «խոսել է հետերնին խորիստ տոնով և համարձակ, այնպես ինչպես կը խօսի պարտատերը պարտապանի հետ» [2, էջ 45]: Գիբբոնի պահանջը զանգեզուրցիները կտրուկ մերժել էին: Նրա վերադառնալու հաջորդ օրը Գորիսից գալիս է Ղարաբաղի գունդը, որը գրեթե հինգ ամիս գտնվել է այնտեղ: Շուշիի հայերը ցնծությամբ են ընդունում գնդի զինվորներին: Մինչդեռ մուսուլմանները

դիմում են սաղրանքի, թե իբրև գնդի զինվորները հարձակում են կատարել թուրքական թաղամասի վրա: Նրանք բողոք են ներկայացնում կապիտան Սերրայդին: Վերջինս մահմեդականների դրդումով ազգային խորհրդից պահանջում է՝ Շուշի եկած հայ զինվորների զենքերը հավաքեն ու հանձնեն իրեն: Եղիշե Իշխանյանը, որը դեռևս համարվում էր ազգային խորհրդի նախագահ, կտրականապես մերժում է Սերրայդի պահանջը և «հասկացնում, թե ինչ է ներկայացնում իրենից գունդը, երբ է կազմել, ովքեր են գնդի զինվորները, որոնք վերադարձել են իրենց տները, զորացրած լինելով պատերազմից յետոյ» [2, էջ 45]<sup>1</sup>:

Անհրաժեշտ էր դրսևորել նոր վարքագիծ: Այդ նպատակով 1918 թ. դեկտեմբերի 14-ին հրավիրվում է քաղաքական և մյուս հոսանքների ներկայացուցիչների խառը ժողով, որտեղ որոշվում է «դաշնակից ուժերի դեմ յանդիման դուրս գալ միացեալ ճակատով, առանց տարաձայնութեան» [8, էջ 306]: Ժողովը որոշում է ստեղծել Ժամանակավոր ազգային խորհուրդ, որը պետք էր նախապատրաստեր ու հրավիրել արցախահայության չորրորդ համագումարը, որը պետք է պատասխան տար անգլո-ադրբեջական նկրտումներին: Անհրաժեշտ էր պայքարն ուժեղացնել նաև ներքին հակասությունները վերացնելու համար, որը նկատելիորեն վնասում էր երկրամասի միասնությանը: Թեմի առաջնորդ եպիսկոպոս Վահան Տեր-Գրիգորյանին առաջարկվում է իր մոտ հրավիրել երկրամասի գորահրամանատարների ներկայացուցիչներին, քաղաքագլուխ Գերասիմ Մելիք-Շահնազարյանին, միջկուսակցական խորհրդաժողովի նախագահ Հայրապետ Մուսայեյանին, Ժամանակավոր ազգային խորհրդի ողջ կազմին և որոշել մի շարք հարցեր: Թեմի առաջնորդի մոտ այդ հավաքը տեղի է ունենում դեկտեմբերի 16-ին, քաղաքագլխի բնակարանում: Այդ հավաքում Ժամանակավոր ազգային խորհրդի նախագահ է ընտրվում Եղիշե Իշխանյանը:

Անգլո-ադրբեջանական պարագլուխները շտապում էին արագացնել իրենց միտումը: Նախ՝ գեն. Թոմսոնի կարգադրությամբ կապիտան Սերրայդը Ժամանակավոր ազգային խորհրդից պահանջում է հանձնաժողով կազմել և ճշտել տաճկական զորքերի և թուրքերի կողմից Ղարաբաղին հասցրված վնասների չափը՝ իբրև այն վերադարձնելու համար, հետո՝ բնակչությանը համոզել ընդունել Ադրբեջանի իշխանությունը: Թոմսոնի առաջին պահանջը լիովին կեղծ էր և արցախահայությանը մոլորության մեջ գցելու խաբեություն, իսկ երկրորդ պահանջի պատասխանը նրան շատ լավ հայտնի էր: Դեկտեմբերի 23-ին կապիտան Սերրայդը Ժամանակավոր ազգային խորհրդին հայտնում է գեն. Թոմսոնից ստացված հրամանը, որտեղ ասված է, որ Ղարաբաղը պետք է ճանաչի Ադրբեջանի իշխանությունը: Ժամանակավոր ազգային ժողովը, քննարկելով այդ պահանջը, նշում է, որ գեներալի անբարո վարմունքը բխում է «մուսավաթի» պիղծ ցանկությունից, այդ պատճառով էլ նրա պահանջը մերժվում է՝ նկատի ունենալով, որ դրա վերջնական պատասխանը կտա արցախահայության չորրորդ համագումարը: Հետևապես, պիտի սպասել համագումարի որոշմանը:

Անգլիան, տիրելով Բաքվին, Ղարաբաղի հարցում պաշտպանում էր «Ադրբեջանի մուսավաթական կառավարության ձգտումները», իսկ մուսավաթական կառավարությունը, «Օգտվելով անգլիացիների օժանդակությունից..., պահանջեց, որպեսզի Լեռնային Ղարաբաղն անհապաղ մտնի իր իշխանության տակ» [15, էջ 96]: Մեկ ուրիշ հայ հեղինակ՝ պատմական գիտությունների դոկտոր Համլետ Հարությունյանն ընդգծում է, որ «Անդրկովկասին բրիտանական զավթիչները նայում էին միայն երկրամասն իրենց իմպերիալիստական շահերին ենթարկելու տեսանկյունից» և որ «անգլիական գաղութարարներն իրենց զավթողական պլանների իրականացման գործում մուսավաթական Ադրբեջանին մեծ դեր էին հատկացնում: Բրիտանական նվաճողների... նպատակն էր մուսուլմանական Ադրբեջանին, որը տարածաշրջանում աչքի էր ընկնում իր ընդգծված հակառուսական և հակաբոլշևիկյան կեցվածքով, դարձնել բոլշևիզմի դեմ պայքարի համար հենարան, տիրանալ Բաքվի նավթին, ապա ձեռնամուխ լինել ազդեցության ոլորտների տարածմանը ամբողջ Անդրկովկասի... վրա» [16, էջ 123-124]: Իսկ ակադեմիկոս Գալուստ Գալոյանը նշել է, որ այդ ժամանակ «Մուսավաթական Ադրբեջանը, օգտագործելով դաշնակից պետությունների և հատկապես Անգլիայի շահագրգռվածությունը Ադրբեջանում գերիշխող դիրք գրավելու ուղղությամբ, ջանում էր տեր դառնալ Ղարաբաղին, Նախիջևանին ու Զանգեզուրին» [5, էջ 65]:

Այդ պայմաններում չափազանց ծանր էր Հայաստանի վիճակը: Ալեքսանդրապոլում, Արփաչայի ափերին հավաքվել էր 100000 գաղթականություն, որ սովի մեջ էր: Արդեն 1919 թ. հունվարին

<sup>1</sup> Սերրայդը ստիպված էր նահանջել իր պահանջից: Սակայն, դրա փոխարեն, նա առաջարկում է 1919 թ. հունվարի մեկը սկսել նոր տոմարով, որն ընդունվում է ազգային խորհրդի կողմից:

Հայաստանի Հանրապետության 704 հազար բնակչությանը գումարվել էին 350.000 տաճկահայ և 100.000 Կարսից փախած գաղթականներ [5, էջ 61]: Դրան գումարվել էր Ղարաբաղում, Ջանգեզուրում և Նախիջևանում ստեղծված ծանր կացությունը:

Ազերի թուրքերը չէին հրաժարվում իրենց հայաշինջ քաղաքականությունից: Շարունակում էին հարձակումներ գործել հայկական բնակավայրերի վրա, թալանել նրանց ունեցվածքը, փակել ճանապարհները, սպանել մարդկանց, կատարել անասելի այլանդակություններ: Դեկտեմբերի 30-ին Ղարաբաղի զորահրամանատարները Բաքու, Հայոց ազգային խորհրդին ուղարկած նամակում հայտնում են, որ Ղարաբաղի հայ ժողովուրդը մինչև հիմա չի ճանաչել Ադրբեջանի իշխանությունը և չի էլ կարող ճանաչել թե ներկայումս և թե ապագայում: Չայրութով նշում են, որ Անգլիան չպետք է մեզ ստիպի ենթարկվել Ադրբեջանին: «Մեր ժողովրդի մի մասը, շարունակում են հայ զորահրամանատարները, մերկ է ու քաղցած, զուրկ նյութական ամեն մի միջոցից, մի տարի է, ինչ փողի երես չի տեսել: Նա պատրաստ է նույն զոհաբերությունը տանել նաև ապագայում, միայն թե ազատ Ղարաբաղի լեռներում չճանաչի ոչ մի մահմեդական գերիշխանություն»: Նամակի հեղինակները խնդրում են գեն. Թոմսոնին հասկացնել, որ «ամբողջ մի տարվա ընթացքում ազատության համար կռվող դարաբաղցին չի կարող իր արշավույսին ենթարկվել Ադրբեջանի իշխանությանը» [22]:

Անգլիական հրամանատարությունը շտապում էր կատարել «մուսավաթին» տված իր խոստումը: Այդ ճանապարհին քաղաքական հանցագործություն էր, երբ նրա համաձայնությամբ 1919 թ. հունվարի 15-ին ԱԴՀ կառավարության որոշումով ստեղծվում է Ղարաբաղ-Ջանգեզուրի ժամանակավոր գեներալ-նահանգապետություն, որտեղ Թոմսոնի երաշխավորությամբ, ժամանակավոր նահանգապետ է նշանակվում ազգությամբ քուրդ, մասնագիտությամբ բժիշկ, հայատյաց, հայտնի մուսավաթ Խոսրով բեկ Սուլթանովը, որին առաջին ծախսերի համար ԱԴՀ կառավարությունը հատկացնում է հինգ միլիոն ռուբլի [37, էջ 79]:<sup>1</sup> Ժամանակավոր նահանգապետության մեջ մտնում էին Շուշիի, Ջանգեզուրի, Ջևանշիրի և Ջեբրայիլի գավառները:

1919 թ. փետրվարի 3-ին անգլո-ադրբեջանական զորքով Շուշի է ժամանում Սուլթանովը: Նրա հիմնական խնդիրն էր նվաճել Ղարաբաղը և այն ենթարկեցնել Ադրբեջանին: Մի քանի օր հետո՝ փետրվարի 10-ին, Շուշիի թեմական դպրոցի դահլիճում իր աշխատանքները սկսած արցախահայության չորրորդ համագումարը մերժում է Ղարաբաղը Ադրբեջանին բռնակցելու անգլիացիների պահանջը: Համագումարը պնդում է, որ իր իրավունքները կպաշտպանի Կովկասում գտնվող դաշնակից պետությունների ներկայացուցիչների և թե խաղաքար կոնֆերանսի առաջ [1]: Այդ օրերին (փետրվարի 24-ին) Երևանում անգլիական հրամանատարության ներկայացուցիչ զորավար Սաբրը հանրապետության արտաքին գործերի նախարարությանը հաղորդել է, որ զորավար Թոմսոնը Բաքվից հեռագրել է, թե «դոկտոր Սուլթանովը գնում է Շուշի իբրև ընդհանուր նահանգապետ Ջանգեզուրի, Շուշու և Ղարաբաղի շրջանների»: Նա այնտեղ է գնում «միայն օրենքը եւ կարգը պահպանելու համար»: «Նրան թույլ չի տրւած զինուորական ուժի դիմելու և յայտարարւած է, որ եթէ չաշխատի modus vivendi յաջողացնելու համար և չսահմանափակի ազգամիջեան վէճերը, նա կհեռացի պաշտոնից»: Ապա ավելացնում է, որ «կարող է շատ բան անել այդ շրջաններում, ուր լաւ ծանոթ է եւ որտեղ Սուսավաթ կառավարութեան քաղաքական պարագլուխն է. Բայց շատ կարելի է, որ նա չկատարի իր խոստումները: Մայօր Մասսօնը, Պէնջաբի 54-րդ գնդից, կունենայ հսկողութիւն այդ խնդրում եւ միևնոյն ժամանակ կը կարգադրի Անդրանիկի զօրքերի հեռացումը, որոնք պիտի գնան տեղափոխելու Ազգա եւ Շուշի» [9, էջ 153]: Անգլիական հրամանատարության այս շողոքորթությունը մերժվում է Հայաստանի կառավարության կողմից:

Համագումարից հետո երկրամասում մթնոլորտն ավելի է շիկանում: Գեն. Թոմսոնի հանձնարարությամբ նորանոր ուժեր էին կուտակվում նահանգի տարբեր կետերում, նույնիսկ զորամասեր էին բերվում Հնդկաստանից: Ամերիկյան բանակի գնդապետ Ռեյը հետո իր կառավարությանն ուղարկած հաղորդագրության մեջ նշել է, որ «Լեռնային Ղարաբաղի բնակչությունը հայեր են» և զարմանք է հայտնել, որ անգլիական զորքի հրամանատարությունը այնտեղ կառավարիչ է նշանակել «Պր. Սուլթանովին, որն Անդրկովկասում հանրաձանոթ թուրքական գործակալ է» [5, էջ 66]:

<sup>1</sup> Կա տվյալ, որ կարճ ժամանակ հետո Սուլթանովը ստացել է 15 միլիոն ռուբլի ևս (Արցախը կանչում է Անդրանիկին, էջ 114): Այդ գումարի մեծ մասը նախատեսված էր արցախցիների կաշառելու համար, որը, սակայն, մերժվել է:



Սուլթանովը Շուշի մեկնելու նախօրյակին գեն. Թումսոնի կողմից Արցախից ետ է կանչվել կապիտան Սերրայրը և նրա փոխարեն փետրվարի 8-ին այնտեղ է ուղարկվել մայոր Մոնկ Մետոնը: Նրա թարգմանիչ Մալեննիկովը, գալով ազգային խորհուրդ, հայտնում է, թե Մոնկ Մետոնը գեներալ Թումսոնից հեռագիր է ստացել, որը պահանջում է՝ Ղարաբաղի հայությունը ճանաչի Ադրբեջանի գերիշխանությունը և բոլոր հաստատությունները կատարեն Սուլթանովի հրամանները: Նորընտիր ազգային խորհուրդի նախագահ Ասլան Շահնազարյանը պատասխանում է, թե՛ հայտնեցեք մայորին, որ Ղարաբաղի հայության չորրորդ համագումարը միաձայն որոշում է ընդունել չճանաչել Ադրբեջանի իշխանությունը [8, էջ 355]: Արցախահայության չորրորդ համագումարից մի քանի օր հետո, մայոր Մոնկ Մետոնի ստորագրությամբ մի նախագիծ է ներկայացվում նորընտիր ազգային խորհրդին, որը իրենից ներկայացնում է անգլո-ադրբեջանական գիշատիչների կողմից Արցախ-Ղարաբաղը գաղութացնելու ծրագիր, ըստ որի՝ բրիտանական հրամանատարության կողմից ժամանակավոր նահանգապետ նշանակված Սուլթանովի քաղաքական մասով օգնական պիտի նշանակվի ազգությամբ հայ, նահանգապետին կից պետք է ստեղծվի խորհուրդ՝ բաղկացած երեք հայից և երեք թուրքից: Խորհրդում, իբրև բրիտանական հրամանատարության ներկայացուցիչ, մասնակցելու է մի սպա: Նախատեսվում է զորքի բոլոր տեղաշարժերը կատարել բրիտանական միսիայի գիտությամբ: Անգլիական միսիան միաժամանակ հայտարարում է, որ գեներալ-նահանգապետության և նրա մարմինների բոլոր հրամանները պետք է կատարվեն անառարկելիորեն: Ընդդիմությունը կպատժվի ամենավճռական միջոցներով [23]:

Արցախի ազգային խորհուրդը, քննարկելով այդ նախագիծը, մերժում է այն՝ շեշտելով, որ արցախահայությունը չի կարող ընդունել նման ամոթություն: Ազգային ժողովը անգլիական հրամանատարությունից պահանջում է նահանգապետ նշանակել անգլիացու մինչև Փարիզի կոնֆերանսը կլուծի Ղարաբաղի հարցը [35, էջ 92-93]: Անգլիական միսիան այդ առթիվ նամակով դիմում է նաև հայկական զորահրամանատարներին: Վերջիններս, հավատարիմ մնալով չորրորդ համագումարի ընդունած որոշմանը, նույնպես մերժում են անգլիական այդ ամոթագիրը [35, էջ 94]:

Անգլիական հրամանատարությունը չէր հրաժարվում իր բռնած դիրքորոշումից: Այդ առթիվ արցախահայությունը բողոք-նամակներ էր ուղարկում զորավար Անդրանիկին: Ազգային հերոսը մտում էր նրանց ազատության և փրկության հույսը: Նրանք հաղորդում են, որ Ադրբեջանը 4500 զորք է տվել անգլիացիներին՝ բոլշևիկների դեմ կռվելու համար, որի հետևանքով էլ նրա «վայրի դիվիզյան» գրավել է Խանքենդ ավանը ու այստեղի զորանոցները: «Անգլիացիների բարեկամ հայերս,-ասված է նամակում,- շարունակ զսպվում, ճնշվում, ստորացվում» ենք և այլն [2, էջ 82, 86, 93]: Մայոր Մոնկ Մետոնը պաշտպանում էր Սուլթանովի խարդախությունները, որը սպառնում էր ուժ գործադրել և հայերի դիմադրությունը արմատախիլ անել «ամենավճռական միջոցներով» [23]: Որ Արցախ-Ղարաբաղի հարցում Ադրբեջանը օգտվում էր «բրիտանական հրամանատարության աջակցությունից», այդ մասին նյութեր է հրապարակել ժամանակի մամուլը: Անկուսակցական «*Наше время*» թերթը 1919 թ. ապրիլի 5-ին հաղորդել է, որ «անգլիական հրամանատարությունը ձեռնարկում է բոլոր միջոցները՝ Արցախում հաստատելու Ադրբեջանի իշխանությունը», «կանգ չի առնում ոչ մի միջոցի առաջ, որպեսզի հասնի ցանկալի արդյունքների»: Թերթը եզրակացնում է, որ անգլիական քաղաքականությունը լի է արյունոտ և լուրջ բարդություններով, որովհետև «Ղարաբաղի բնակչությունը ինքնակամ չի համաձայնվի իր վրա ընդունել ադրբեջանական կալվածատերերի և բեկերի իշխանությունը»:

Հայաստանի կառավարությունը շատ ուշացումով սկսեց անհանգստանալ Արցախ-Չանգեզուրի ճակատագրի համար: Նա շատ նպաստավոր պահեր է բաց թողել, երբ կարող էր իր ուժերը մտցնել Ղարաբաղ և այն միացնել հանրապետությանը: 1919 թ. փետրվարի 24-ին հանրապետության վարչապետը Թիֆլիս՝ Ալ. Խատիսյանին ուղարկած նամակում առաջարկում է հանդիպել Անդրկովկասում անգլիական բանակի հրամանատար գեներալ-մայոր Ֆորեստե Ուորկերի հետ և նրան բողոքել Ադրբեջանի կողմից Ղարաբաղ-Չանգեզուրի նահանգապետություն ստեղծելու և Սուլթանովին նահանգապետ նշանակելու առթիվ: Վարչապետը Խատիսյանին հուշում էր բողոքի համար հիմք ընդունել այն, որ Արցախ-Չանգեզուրի լեռնային շրջանների հայ բնակչությունը գենքը ձեռքին պաշտպանել է իր անկախությունը Ադրբեջանից, և որ այդ տարածքը հանդիսանում է «Հայաստանի անբաժան մասը» [23]: Գեն. Թումսոնը, 1919 թ. մարտի 10-ին նշանակվելով Անդրկովկասում անգլիական բանակի գլխավոր հրամանատար, Բաքվից մեկնում է Թիֆլիս, որտեղից էլ ժամանում է Երևան և մարտի 28-ին հանդիպում ունենում վարչապետ Ալ. Խատիսյանի, Հ.

Հախվերդյանի և Ս. Տիգրանյանի հետ: Թոմսոնը փորձում է Խատիսյանին համոզել, թե Անգլիան միայն միտում ունի սննդամթերքներով ապահովել Ղարաբաղում գտնվող 30.000 հայ և 10.000 մուսուլման գաղթականներին և բացել ճանապարհները: Նա խոստանում է դադարեցնել ադրբեջանական զորամասերի տեղաշարժը Ղարաբաղում, թույլ տալ Չանգեզուրը ղեկավարել այնտեղի ազգային խորհուրդը, և Մոնկ Մեսենի հետ կապ պահպանելու համար Հայաստանը ներկայացուցիչ ունենա Ղարաբաղում [23], [19]:

1919 թ. մարտի սկզբին Գորիս է հասնում հունվարի 21-ին Հայաստանի կառավարության որոշմամբ ստեղծված Չանգեզուր-Ղարաբաղ հայկական շրջանի լիազոր կապիտան Արսեն Շահնազանը: Նրա գործունեությունը հիմնականում ուղղված էր Ղարաբաղ-Չանգեզուրի նկատմամբ անգլո-ադրբեջանական քաղաքականության դեմ<sup>1</sup>:

Գեներալ Թոմսոնին փոխարինած նրա շտաբի պետ գնդապետ Դ. Շատելվորտը Արցախ-Չանգեզուրը գաղութացնելու գործում ավելի վճռական էր: Նա խիստ դժգոհ էր Արցախ-Չանգեզուրի հայությունից, որոնք մերժել են անգլիական հրամանատարության պահանջը: Նա, ստանձնելով Բաքվում գտնվող անգլիական բանակի հրամանատարի պաշտոնը, որոշում է արագացնել Թոմսոնի ցանկությունը՝ Արցախ-Չանգեզուրում հաստատել Ադրբեջանի գերիշխանություն: Նա Արցախի ազգային խորհրդից պահանջում է հրավիրել նոր համագումար և իր ներկայությամբ քննարկել Արցախը Ադրբեջանին ենթարկվելու հարցը:

Այդ ժամանակ Արցախ-Չանգեզուրում մոլեգնում էին սովը և վարակիչ հիվանդությունները: Փոխանակ այդ մասին մտահոգվելու՝ գնդապետ Շատելվորտը հանձնարարություն ուներ ձնշել Արցախ-Չանգեզուրի ըմբոստությունը: 1919 թ. ապրիլի 17-ին Արցախի հայոց ազգային խորհրդի նախագահ Եղիշե Իշխանյանը Թիֆլիս՝ դաշնակից ուժերի հրամանատարությանը ուղարկված նամակում նշում է, որ «Ղարաբաղի գյուղացիությունը լսել անգամ չի ուզում Ադրբեջան անունը»: Շեշտում է, որ Սուլթանովի նոր պահանջը «մարտահրավեր է ուղղած Ղարաբաղի հայությանը... Ինչ որ ձեզնից կախված է գալիք կատաստրոֆայի առաջն առնելու, մի ուշացրեք... Փրկեցեք դրությունը, եթե կարող եք, մենք հանգստություն չունենք» [17]:

Արցախահայության այդ խնդրանքը մնում է ձայն բարբառ: Ահա նման պայմաններում ապրիլի 23-ին Շուշիի թեմական դպրոցի դահլիճում իր աշխատանքն է սկսում արցախահայության հինգերորդ համագումարը, որին ներկա էին Դ. Շատելվորտը և Սուլթանովը: Շատելվորտը, մասնակցելով համագումարին, մտադիր էր «խօսել հայ ժողովրդի ներկայացուցիչների հետ և լսել նրանց խոսքը» [8, էջ 394]: Շատելվորտը իր արտասանած ճառում փորձում էր արդարացնել Կովկասում բրիտանական քաղաքականությունը: Հայտարարում է, թե բրիտանացիների խնդիրն է Անդրկովկասի սահմաններից հեռացնել թուրքերին և գերմանացիներին, վերականգնել Բաքվի և Բաթումի միջև երկայտուղային հաղորդակցությունը, երկրամասում կարգ ու խաղաղություն հաստատել: Անդրադառնալով Ղարաբաղի և Չանգեզուրի հարցին՝ նշում է, որ Ադրբեջանը մտադիր է բաց անել բոլոր ճանապարհները և երկրամասում կարգ ու կանոն հաստատել: Մոտենալով իր հիմնական խնդրին՝ գնդապետը ոգևորված գովեստի խոսքեր է շոսալում Սուլթանովի հասցեին: Ապա առաջարկում է համագումարը ընդհատել և ցրվել [4]:

Ինչպես երևում է հրապարակված և արխիվային նյութերից, գնդապետ Շատելվորտը թե համագումարում արտասանած իր ճառում և թե գեն. Թոմսոնին ուղարկած գեկուցագրում իր մորթուց դուրս է գալիս անցկացնելու անգլիական ծախու տեսակետը: Նա, արհամարհելով Ղարաբաղի ավելի քան 300.000 հայերի անհանգստությունը, պնդում էր, թե հայերը պետք է ճանաչեն Սուլթանովի իշխանությունը, իսկ Հայաստանի Հանրապետությունը պետք է Ղարաբաղից և Չանգեզուրից ետ կանչի իր բոլոր ներկայացուցիչներին [5, էջ 68]:

Ակնհայտ է, որ գեն. Թոմսոնը չէր կարող ինքնակամորեն հարցը լուծել: Նա ղեկավարվում էր իր կառավարությունից ստացած հրահանգով՝ «պաշտպանել մուսավաթական վարչակարգը» [5, էջ 69]: Ինչ էլ որ լինի, արցախցիները մնում են անդրդվելի: Ապրիլի 25-ին համագումարում պատասխանելով անամոթ գնդապետին՝ ասում են «Ադրբեջանը միշտ աջակից և գործակից է եղել Տաճկաստանի կողմից ընդհանրապես հայերի և մասնավորապես Ղարաբաղի հայության դեմ ուղղված զավթություններին,

<sup>1</sup> Ապրիլի 4-ին, Թոմսոնի խոստման համաձայն, փոխգնտապետ Միշա Արզումանյանը Հայաստանի կառավարության կողմից նշանակվում է անգլիական հրամանատարությանը կից Հայաստանի կառավարության ներկայացուցիչ Ղարաբաղ-Չանգեզուրում (ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 42, թ. 9):

որպեսզին մնում է այժմ...»: Ելնելով դրանից՝ «Ղարաբաղի հայության V համագումարը անհնարին է համարում ընդունել Ադրբեջանի հետ առնչություն ունեցող որևէ իշխանության վարչական ձև»: Համագումարը, երկրորդ անգամ լսելով Շատելվորտի հրամայական պահանջը, «միանգամայն անհնարին է գտնում փոխելու իր ժխտական որոշումը, որը թելադրված է Ղարաբաղի ամբողջ հայության անհողորդ կամքով, որին դավաճանել ոչ մի դեպքում չեն ուզում» [35, էջ 163], [3, էջ 15-17], [40, էջ 171-173]:

Դ. Շատելվորտը չսպասելով համագումարի ավարտին, կատաղած հեռանում է և մեկնում Գորիս: Նպատակ ունենալով այնտեղից հեռացնել Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչներին և Ջանգեզուրը հայտարարել Ադրբեջանի տարածք:

Մայիսի 3-ին Թիֆլիսում տեղի է ունենում խորհրդակցություն հայկական (Ա. Խատիսյան, Լ. Եվանգույան) և անգլիական հրամանատարության միջև (Վ. Թոմսոն, Վ. Բիչ, Ա. Բրաֆ, Կ. Դևի): [39, էջ 69-70]: Այդ խորհրդակցությունում քննության է առնվում Ղարաբաղ-Ջանգեզուրի վերաբերյալ Դ. Շատելվորտի ուղարկած զեկուցագիրը, որն իրենից ներկայացնում է մի անամոթ զրպարտագիր: Մասամբ ասված է, թե Ղարաբաղի և Ջանգեզուրի հայության ըմբոստությունը կազմակերպում են Հայաստանից ուղարկված ներկայացուցիչները: Նաև ասված է, թե արցախահայությունը մերժում է բոլոր առաջարկությունները, որովհետև հույս ունի, թե օգնություն կստանա Ջանգեզուրից: Անգլիական հրամանատարությունը հիմնականում մեղադրում է դաշնակցությանը: Այդ խորհրդակցությունում գեն. Թոմսոնը իր ելույթում պնդում է, թե Հայաստանը խառնվում է Ղարաբաղի գործերին և դրանով իսկ պատերազմ հայտարարում Անգլիային: Հայաստանի վարչապետ Ալ. Խատիսյանը, պատասխանելով Թոմսոնի այդ հերյուրանքին, նշում է, որ Ղարաբաղը չի ղեկավարվում Հայաստանի կողմից, այնտեղից ետ կանչելու ոչ մեկին չունի և չի կարող պատասխանատու լինել: Իսկ եթե, վճռականորեն պնդում է Ալ. Խատիսյանը, անգլիական հրամանատարությունը ցանկանում է Ղարաբաղում տեղի ունեցող իրադարձությունների համար պատասխանատու ճանաչել Հայաստանի կառավարությանը, ապա պետք է Ղարաբաղի ղեկավարությունը հանձնվի նրան: Հայաստանի վարչապետը շեշտում է, որ Ղարաբաղի 300.000 հայության ցանկությունների նկատմամբ ոչ ոք իրավունք չունի բռնություն գործադրելու: Գեն. Թոմսոնը պնդում է, որ կապիտան Արսեն Շահմազյանը պետք է ետ կանչվի Ջանգեզուրից [18]: Իմիջիայլոց այդ խորհրդակցությունից մեկ օր անց՝ մայիսի 2-ին, Արսեն Շահմազյանին նման պահանջ ներկայացրել է նաև մայոր Մոնկ Մեսենը և հանձնարարել այնտեղ գտնվող Անգլիայի ներկայացուցիչ կապիտան Տաունսենդին պաշտոնապես չճանաչել Շահմազյանին և անհրաժեշտության դեպքում ձերբակալել նրան [18, թ. 25 և 32]:

Դ. Շատելվորտը՝ մերժված, ամոթահար, վերադառնում է Գորիսից: Նա երկրորդ անգամ Գորիս է մեկնում մայիսի 9-ին՝ այդ օրերին Արցախ-Ղարաբաղ եկած Հայաստանի խորհրդարանի անդամ Հովսեփ Արդուրյանի հետ՝ 25 հնդիկ զինվորների ուղեկցությամբ և 11 ավտոմոբիլով: Տեղ գյուղի մոտ զինվորները նրանց կանգնեցնում են և թույլ չեն տալիս շարունակել ճանապարհը: Այդ միջադեպը Դ. Շատելվորտը ամոթահար է ընդունում: Հետո նրան թույլատրվում է մենակ մեկնել Գորիս: Այնտեղ նրա հոխորտանքին Ջանգեզուրի ազգային խորհրդի նախագահ Սմբատ Մելիք-Ստեփանյանը հայրենակիցների անունից հանգիստ պատասխանում է. «Մեկընդմիջտ, գեներալ (թող) պարզ լինի ձեզ, որ Ջանգեզուրը, ինչ գնով էլ լինի, չի ընդունելու Ադրբեջանի վարչակազմը...»<sup>1</sup> [34]:

Գեն. Շատելվորտը հույս ունենալով Գորիսում «պատշաճ կարգ ստեղծել եւ դաս տալ բրիտանական միսիայի հանձնարարականներն արհամարող զանգեզուրցիներին» [25, էջ 55]: Վերջիններս Գորիսի հրապարակում ցույց են կազմակերպում Շատելվորտի դեմ և քիչ էր մնում նրան ձերբակալելին: Նա տեսավ «աշխարհից կտրված այս լեռնաստանում էլ հասկացել են, թե ինչ են անգլիացիները եւ արդեն զգվում են նրանցից» [6, էջ 390]: Գոռոզ անգլիացու նկատմամբ արհամարհական վերաբերմունքը ստիպեց հեռանալ Գորիսից և մայիսի 18-ին այնտեղից հանել անգլիական զորամասը: Նա պնդում էր, թե այդ ամենը կազմակերպել է փոխգնդապետ Միշա Արզումանյանը, և նրան արտաքսում է երկրամասից:

Դեռ մարտ ամսին գեն. Թոմսոնը հայտարարել էր, թե պետք է Ղարաբաղից արտաքսվեն բոլոր քաղաքական գործիչները: Նրա այդ լիրբ պահանջի կատարումը իր վրա էր վերցրել գեներալ Շատելվորտը, որը նախաձեռնեց հունիսի 4-7-ին: Հենց ադ օրերին Շուշի քաղաքում, հարևան Ղալբալիչեն, Կրկժան, Փահլուր, Ջամիլու, Խանաձախ, Դաշուշեն և այլ գյուղերում կազմակերպվում է

<sup>1</sup> Շատելվորտը այդ ժամանակ արդեն բրիգադի գեներալ էր:

սպանդ, որին ակտիվորեն մասնակցում էր Սուլթանովի եղբայր Մելիմբեկի քրդական ջոկատը: Ղայբալիշենում կազմակերպված ցեղասպանության հետևանքով գյուղի 700 բնակչից կենդանի են մնում 11 տղամարդ և 87 կին ու երեխա [18, թ. 165]:<sup>1</sup> Յոթանասուն տուն ունեցող բնակավայրը մեկ օրվա ընթացքում վերածվում է մոխրակույտի:

Արխիվային մի փաստաթղթում նշվում է, որ Ղարաբաղի դեպքերի քննող Ադրբեջանի պառլամենտական հանձնաժողովի հաշվետվության մեջ նշված է, որ գյուղի տների ավերակներում կիսախանձ դիակներ են, գետինը ծածկված է երեխաների դիակներով, միայն մատուռում մորթվել է 50 հայ [20, թ. 168-172]: Այդ գազանությունների կատարմանը, որը տեղի է ունեցել հունիսի 5-6-ին, ականատես է եղել անգլիական հրամատարությունը: Ժամանակակիցներից Աբրամ Կիսիբեկյանը պատմում է, որ երբ քաղաքում լսվում է, որ Ղայբալիում մահմեդականները կոտորում են հայերին, ամբոխը շարժվում է քաղաքի արևելյան ծայրը, որտեղից երևում է ծխի մեջ կորած Ղայբալուն: Նրանք «Կանգ առան ավերակ պարիսպների մոտ, որտեղից երևում էր Ղայբալուն: Այստեղից մարդու հասարակ աչքով տեսանելի էր այդ զարհուրելի տեսարանը, որտեղ կատարվում էր ոճրագործություն, որը կազմակերպել էր Սուլթանովը՝ անգլիացիների համաձայնությամբ: Մարդկային դեմքով այդ բորենիները, ականատես լինելով դժոխային տեսարանի..., շատ հանգիստ շարունակում էին գրուցել ու ծխել..., պակաս սոսկալի չէր դրությունը նաև քաղաքում: Հազարավոր կանայք ու երեխաներ խումբ-խումբ փամփուշտների սուլոցների տակ խելակորույս ու սարսափահար աղիողորմ ճիչերով վազվզում էին փողոցից փողոց, թաղից թաղ՝ մի ապահով անկյուն գտնելու» [26, էջ 356-357]:

Այդ զարհուրելի օրերի նախօրյակին Շուշի էին բերվել ազերի մի քանի հազար ասկյարներ: Անգլիացիների կողմից հունիսի 5-ին քաղաքից արտաքսվել էին քաղաքական գործիչներ Եղիշե Իշխանյանը, Հարություն Թումյանը և Ասատուր Ավետիսյանը: Արցախ-Ղարաբաղում տեղի ունեցած հունիսյան կոտորածները, անկասկած, տեղի են ունեցել անգլիական զորքերի հովանու տակ [5, էջ 70]:<sup>2</sup> Նրանք նույնիսկ հայտարարում են, թե արցախահայերը պետք է Ղարաբաղը թողնեն Ադրբեջանին և տեղափոխվեն Ալաշկերտ, Վան և Բասեն [23]:

Անգլիացիների այդ վանդալիզմի դեմ ոտքի են ելնում արցախցիները: Անգլիացիները սիպայիների գորամատով գրավում են Շուշիի գորանոցները և Սուլթանովի պահանջով փոստն ու գանձարանը հայկական թաղամասից տեղափոխում թուրքական թաղամաս: Դահիճ Սուլթանովը հունիսի 7-ին իր կառավարությանը հեռագրում է. «Ղարաբաղում հայերին ենթարկելու հարցը շուտով կունենա հաջող ավարտ» [35, էջ 238]: Հայաստանի արտաքին գործերի նախարար Սիրական Տիգրանյանը վարչապետ Ալ. Խատիսյանին հունիսի 7-ին հաղորդել է, որ Սուլթանովի գործողությունները մնում են անպատիժ, թուրք ասկյարների գնդակներից գոհվել են մի քանի հայ, հայերը դիմել են Սոնկ Մեսունին, օգուտ չի տվել, Սուլթանովը նույնիսկ չի ընդունել անգլիացի սպա Տաուգենդին [35, էջ 236-237]:

Արցախ-Ղարաբաղում տեղի ունեցած ողբերգության դեմ բողոքի ցույցեր են տեղի ունենում Բաքվում, Թիֆլիսում, Երևանում, Սուխումիում և այլ տեղերում, որտեղ մերկացվել է անգլո-ադրբեջանական բարբարոս քաղաքականությունը և բողոքներ ուղարկվել Ադրբեջանի կառավարությանը ու դաշնակից պետությունների ռազմական ուժերի հրամանատարությանը [21]: Բողոքներ են ուղարկում նաև հայոց ազգային խորհուրդները, հայոց կաթողիկոս Գևորգ 5-րդը, քաղաքական կուսակցությունները և այլն [31], [21 էջ 260]:

Անդրկովկասում անգլիական ռազմական ուժերի նոր հրամանատար գեն. Կորրին, շարունակելով իր տերերի քաղաքականությունը, ցինիկաբար հայտարարում է, թե Ղարաբաղում ոչինչ էլ չի պատահել, հայերը պարզապես աղաղակում են: Նույնիսկ հայտարարում է, թե Ղարաբաղ է ուղարկվել սպա Կիշբենը, որը կհայտնաբերի մեղավորներին և որոնք «անգլիական հրամանատարության կարգադրությամբ կենթարկվեն դաժան պատժի» [32, թ. 81]: Այդ ստի դեմ նույնիսկ ըմբոստացել է անգլիացի գնդապետ Կլատերբերգը, որը քաջություն է ունեցել ճշմարտությունն ասել գեն. Շատելվորտին, որ Ղայբալիշենի սպանդը պատահական չի եղել, այն նախօրոք մտածված է եղել Սուլթանովի կողմից և պահանջել է նրան դատի տալ [18, թ. 165], [39, էջ 77]: Բրիտանական ուժերի հրամանատարը հունիսի 19-ին Հայաստանի կառավարությանն ուղղած

<sup>1</sup> «Աշխատավորը» (26 հուլիսի 1919) հաղորդել է, որ կենդանի է մնացել 188-ը: «Кавказское слово» թերթը (1 հուլիսի 1919) զոհերի թիվը ցույց է տվել 530:

<sup>2</sup> Միմոն Վրացյանի տվյալներով այդ օրերին Ղարաբաղում զոհվել են 580 հայ (Միմոն Վրացյան, նշվ. աշխ., էջ 337):

նամակում հաղորդում է, թե «Ձեր կառավարությունը վարչական որևէ իրավունք չունի Ղարաբաղում» և որ «անգլիական հրամանատարությունը կանի ամենի՝ ինչ ապագայում ապահովելու Ղարաբաղի անվտանգությունը և խաղաղությունը» [32]: Արցախ-Ղարաբաղում տեղի ունեցած այդ վանդալիզմը քննելու համար Բաքվից այնտեղ մեկնեց խորհրդարանի անդամներից (Պ. Չուբար և Խոջոյան) կազմած հանձնաժողովը, որը հունիսի 22-ին ազգային խորհրդում հանդես գալով հաշվետվությամբ, տեղի ունեցած արյունոտ իրադատությունների գլխավոր մեղավորը համարում է նահանգապետ Սուլթանովին, որը չէր խորշում ամբողջ Ղարաբաղը զավթելուց և բնակչությանը ոչնչացնելուց: Ասենք, որ Արցախում տեղի ունեցած այդ բարբարոսությունները մերկացվել են նաև Լեոյի, Հարություն Թումյանի, Միքայել Թումանյանի և այլ հեղինակների կողմից: Նրանք շեշտել են, որ Արցախում թուրք և քուրդ դահիճների հետ գործած անգլիացիները պետք է կանգնեն դատարանի առաջ: Հարություն Թումյանը, ատելությամբ գնահատելով «անգլիական զազազած» «բուլդոզի» հակահայկական և աղբբեջանամետ գործունեությունը [11, էջ 220], ընդգծել է, որ այդ բարբարոսությունները կմնան անպատիժ: Իսկ Միքայել Թումանյանը գրել է, որ «անգլիացիները փորձել են դարաբաղցիների և զանգեզուրցիների դիմադրությունը կոտրել» [36, էջ 239]: Անգլիական հրամանատարությունը համոզված էր, որ շուտով ազերի ասկյարները Ղարաբաղի տարածքով «կանցնեն հնդիկ զինվորների ուղեկցությամբ», հակառակ դեպքում արցախցիների գործունեությունը կդիտվի «որպես հարձակում Անգլիայի վրա» [36, էջ 240]: Գեն. Շատելվորտը շարունակում էր պահանջել՝ «արցախցիները ենթարկվեն Ադրբեջանին, որը իբրև երկրամասը կդեկլարի տեղի բնակիչների մասնակցությամբ» [36, էջ 240]: Առանց ամոթի՝ նա կեղծում է, թե Արցախն ու Զանգեզուրը Խաղաղության կոնֆերանսի կողմից հանձնվել են Ադրբեջանին: Այդ կեղծիքը համբերությունից հանում է դարաբաղցիներին և զանգեզուրցիներին [36, էջ 241]: Իմիջիայլոց, այդ Ժամանակ Թիֆլիսում գտնվող ֆրանսիական միսիան պաշտպանում է դարաբաղցիների դիրքորոշումը Ադրբեջանի նկատմամբ: Դա կատաղեցրեց գեն. Շատելվորտին: Գեն. Կորրին, պաշտպանելով Զանգեզուրի նկատմամբ անգլիական հրամանատարության դիրքորոշումը, փորձում է արդարանալու ելք գտնել:

Անգլիական հրամանատարությունը դեռևս երկու ամիս առաջ հայտարարել էր, թե շուտով անգլիական բանակը կհեռանա Կովկասից: Մինչև հունիսի 8-ը Կարսում և հունիսի 7-ը Նախիջևանում ոչ մի անգլիացի զինվոր չէր մնացել [13, էջ 314]: Ըստ էության՝ Ղարաբաղն ու Զանգեզուրը Ադրբեջանին հանձնելու անգլիացի գեներալ Վ. Թոմսոնի, Դ. Կորրիի, Դ. Շատելվորտի և մյուսների ճամարտակությունները վերջանում են անհաջողությամբ:

Անգլիացիները Արցախ-Ղարաբաղ ներխուժելուց ութ ամիս անց՝ 1919 թ. հուլիսի 12-ին, մայր Մոնկ Մետոնը, 396 անգլիական զինվորներով անամոթաբար հեռանում են երկրամասից [29]<sup>1</sup>, իսկ նույն թվականի սեպտեմբերին ամբողջ Անդրկովկասից, բացի Բաթումից, հեռանում են բոլոր անգլիացիները [30, էջ 200]: Արցախահայությունը ատելությամբ և նզովքով է ճանապարհում իր տունը ներխուժած անցանկալի «բուլդոզին»:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Արև» (Բաքու), թ. 17, 26.02.1919:
2. Արցախը կանչում է Անդրանիկին: Փաստաթղթեր, Եր., 1995:
3. Արամայիս, Ղարաբաղի տագնապը, Եր., 1993:
4. «Աշխատավոր», 20 մայիսի, 1919:
5. Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Եր., 1999:
6. Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925:
7. Իշխանյան Բ., Բաքվի մեծ սարսափները: Անկետային ուսումնասիրություն սեպտեմբերյան անցքերի, 1918, Թիֆլիս, 1920:
8. Իշխանյան Ե., Լեոնային Ղարաբաղը 1917-12920 թվականին, Եր., 1999:
9. Խատիսյան Ալ., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Աթենք, 1930:
10. Ուլուբաբյան Բ., Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Եր., 1994:

<sup>1</sup> Գայանե Մախմուրյանը նշում է, որ անգլիական զորքը Ղարաբաղից հեռացել է օգոստոսի 18-ին: Այդ օրն Եվլախ են հասել և այնտեղից Բաթում են մեկնել Փենջաբի 84-րդ գնդի զրահապատ մեքենաների 13-րդ մարտկոցի ակամաձիգները և թագավորական Վորվիքշիրի գնդի 9-րդ գումարտակի ծառայողները (Г. Махмуриян, նշվ. աշխ., с. 53):

11. Թումյան Հ., Դեպքերը Լեռնային Ղարաբաղում 1917-1920 թթ., Եր., 2008:
12. Միմոնյան Հ., Անդրանիկի ժամանակը, գիրք Բ, Եր., 1996:
13. Վրացյան Ս., Հայկական Հանրապետություն, Եր., 1993:
14. Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), Ֆ. 221, ց. 1, գ. 30, թ. 28, նաև՝ «Кавказское слово», 12 декабря 1918.
15. Հովհաննիսյան Գ. Ա., Սովետական իշխանության հաստատումը Ղարաբաղում, Եր., 1971:
16. Հարությունյան Հ. Ս., Լեռնային Ղարաբաղը 1918-1921 թթ., Եր., 1996:
17. Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգում (1918-1920 թթ), գիրք 1: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Եր., 2003:
18. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 309, թ. 36-38, 165:
19. «Զանգ», 4 ապրիլի 1919:
20. ՀԱԱ, ֆ. 4033, ց. 5, գ. 461, թ. 168-172:
21. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 211, թ. 164, գ. 309, թ. 171-173, գ. 299, թ. 403. Ֆ. 276, ց. 1, գ. 42, թ. 96, 111-112, ֆ. 252, ց. 1, գ. 1, թ. 61 և այլն:
22. ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 75, թ. 5:
23. ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 41, թ. 11-13:
24. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 79, թ. 115:
25. Ուլուբաբյան Բ., Արցախյան գոյապայքարը, Եր., 1994:
26. Կիսիբեկյան Ա., Հուշեր 1, Եր, 2011:
27. «Հայրենիք», 1923, թ. 9, էջ 100:
28. «Հայրենիք», 1935, թ. 7, էջ 127:
29. «Հայրենիք», 1983, թ. 12, էջ 125:
30. Հայոց պատմություն, հատոր IV, գիրք առաջին, Եր, 2010:
31. «Ժողովուրդ» (22 հունիսի 1919),
32. ՀԱԱ. Ֆ. 276, ց. 1, գ. 42, թ. 81, թ. 93:
33. ՀԱԱ, ֆ. ֆ. 200, ց. 1, գ. 244, թ. 2:
34. ՀԱԱ. ֆ. 1022, ց. 3, գ. 91, թ. 33-34
35. Нагорный Карабах ..., с. 260.
36. Туманян М., Дипломатическая история республики Армения 1918-1920 гг., Ер., 2012.
37. Азербайджанская Демократическая Республика (1918-1920), Баку, 1998.
38. Адамия В. И., Из истории английской интервенции в Грузии (1918-1921 гг.), Сухуми, 1961.
39. Махмурян Г.Г., Политика Великобритании в Армении и Зоквказье в 1918-1920 гг: Бремя белого человека, Ер., 2001.
40. R. Hovannisian, The Republic of Armenia, vol.I, Los Angeles, 1971.

## РЕЗЮМЕ

### Карабах-Зангезур в сфере британо-азербайджанской политики (1918-1919)

Грант Абрамян

**Ключевые слова:** мировая война, прекращение огня, союзники, вмешательство, воссоединение, пожертвование, регион, миссия, национальный совет, колонизация, коррупция.

Осенью 1918г. союзные силы Антанты под руководством английского генерала В. Томсона вошли в Баку после поражения Турции в первой мировой войне и после выхода войск из Закавказья. Генерал принимает меры для соединения территорий исторической Армении – Зангезур-Арцаха к Азербайджану под влиянием Мусаватского правительства Азербайджана. Однако армяне Зангезур - Арцаха настоятельно отказываются от англо-азербайджанских стремлений. Политика азербайджано-британских колонистов завершается поражением. Летом 1919 года англичане с поражением выходят из Карабаха, последних армяне Арцаха провожают, ненавидя и проклиная.

**SUMMARY**  
**Karabakh-Zangezour in the sphere of British-Azerbaijani policy (1918-1919)**  
**Hrant Abrahamyan**

**Key words:** world war, ceasefire, allies, intervention, reunion, donate, region, mission, national council, colonize, corruption.

The main forces of Entente entered Baku under the commands of general V. Thomson after Turkish defeat in the World War I and after having withdrawn its troops from South Caucasus in autumn of 1918. The general took measures to annex Artsakh – Zangezour territories of historical Armenia to Azerbaijan under the influence of Azerbaijani Musavat government. The Armenians of Artsakh-Zangezour decisively rejected English-Azerbaijani aspirations. The policy of Azerbaijani-British colonists failed. Englishmen withdrew from Karabakh ashamed, being cursed and hated by Armenians of Artsakh.